Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ զանգվածային լրատվության միջոցներով և պետական մարմինների ինտերնետային էջերով 2015 թ. հրապարակված նյութերի

Վանաձոր 2016 թ.

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Կազմող՝

Մարիետա Թեմուրյան

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունությունը Հայաստանում ժողովրդավարության և մարդու իրավունքների մարտահրավերների լույսի ներքո» ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ՝ N 19145:

Սույն ուսումնասիրության մեջ տեղ գտած տեսակետների հեղինակը ՀՔԱ Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Ուսումնասիրության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին, այն արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չի ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Բովանդակություն

Նախաբան 4

Մեթոդաբանությունը 4

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների աղբյուրները 5

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների բնույթը, հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած նրանց ազդեցությունը 12

Հրապարակումների բնույթը 12

Հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցությունը 13

Հրապարակված նյութերը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտման տեսանկյունից 17

Ամփոփում 18

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերաբերյալ 20

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Նախաբան

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ Կազմակերպություն) 2011 թվականից սկսած դիտարկում է զանգվածային լրատվության միջոցներով և պետական մարմինների ինտերնետային էջերով հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակված նյութերը՝ նշված ոլորտի նկատմամբ պետության և հասարակության վերաբերմունքի, առկա միտումների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող (այսուհետ՝ ՀԱԽՈՒ) անձանց իրավունքների պաշտպանության վիճակը բացահայտելու նպատակով[1]:

Սույն տեղեկանքում Կազմակերպությունը ներկայացնում է հերթական ուսումնասիրության արդյունքները 2015 թ. հրապարակված նյութերի հիման վրա:

2015 թ. դիտարկվել է 561 նյութ, որոնք հրապարակվել են ինտերնետային 16 էջերով՝ moh.am, mlsa.am, police.am, genproc.am, news.am, a1plus.am, lragir.am, 168.am, 7or.am, slaq.am, ilur.am, galatv.am, armlur.am, 1in.am, operativ.am, hhpress.am:

Մեթոդաբանությունը

Ուսումնասիրության նպատակով հավաքագրված նյութերը դասակարգվել են ըստ նրանց տարածման աղբյուրների, տեսակի, ինչպես նաև հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցության:

Ըստ տարածման աղբյուրների՝ նյութերը դասակարգվել են երկու խմբի՝

- պետական,
- ոչ պետական:

Պետական և ոչ պետական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը իր հերթին խմբավորվել է ըստ կոնկրետ մարմինների, կազմակերպությունների և մարդկանց խմբերի:

Առանձնացվել են հրապարակումների հետևյալ երեք տեսակները՝

- հետաքննական,
- տեղեկատվական,
- դիրքորոշում արտահայտող:

Ըստ հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցության՝ նյութերը բաժանվել են երեք խմբի՝

[1] http://hcav.am/wp-content/uploads/2015/07/%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D6%82%D5%B4-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84.pdf

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- նյութեր, որոնք ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ ձևավորում են բացասական վերաբերմունք,
- նյութեր, որոնք ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ ձևավորում են դրական վերաբերմունք,
- նյութեր, որոնք որակում ենք չեզոք բնույթի (դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում):

Առանձին դիտարկվել են նաև այն հրապարակումները, որոնք պարունակում են ՀԱԽՈՒ անձանց իրավունքների խախտման տարրեր կամ անդրադառնում են ՀԱԽՈՒ անձանց իրավունքների հնարավոր խախտումներին:

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների աղբյուրները

Մշտադիտարկման ընթացքում 2015 թ. հավաքագրված 561 հրապարակումներից 20-ը տարածվել են պետական մարմինների ինտերնետային էջերով, 541-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Պետական մարմինների ինտերնետային էջերով 2015 թ. տարածված 20 նյութերից 7-ը տարածվել է ՀՀ Առողջապահության նախարարության, ևս 7 նյութ՝ ՀՀ Ոստիկանության, 5 նյութ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և 1 նյութ՝ ՀՀ Գլխավոր դատախազության ինտերնետային էջերով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2011-2015 թթ. պետական մարմինների ինտերնետային էջերով տարածված հրապարակումները ըստ գերատեսչությունների

N	Պետական մարմին	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	Ընդամենը
1	Առողջապահության նախարարություն	5	1	4	17	7	**34**
2	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	-	-	-[2]	2	5	**7**
3	Ոստիկանություն	8	0	0	8	7	**23**
4	Դատախազություն	0	2	0	1	1	**4**
Ընդամենը		**13**	**3**	**4**	**28**	**20**	**68**

[2] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջը մինչ 2014 թ. չի դիտարկվել, սակայն երբ 2013 թ. մայիսի 2-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգը, իսկ 2013 թ. սեպտեմբերի 13-ին՝ Հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թթ. ծրագիրը, որի հիմնական պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, առաջացավ նաև այս ինտերնետային էջի դիտարկման անհրաժեշտությունը:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Համեմատելով պետական մարմինների ինտերնետային էջերով տարածված հրապարակումների քանակը ըստ տարիների, կարող ենք նկատել, որ 2011-2015 թթ. նյութերի հրապարակման տեսանելի աճ է գրանցվել և դա հիմնականում ՀՀ Առողջապահության և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ինտերնետային էջերով հրապարակված նյութերի հաշվին: Այս հանգամանքը կապված է նշված նախարարությունների, ուստի և պետության կողմից, հոգեկան առողջության բնագավառի նկատմամբ ուշադրության մեծացմամբ, որը պայմանավորված է ՀՀ Կառավարության կողմից համապատասխանաբար 2013 թ. սեպտեմբերին և 2014 թ. ապրիլին «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի» և «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության»[3] հաստատմամբ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ 2015 թ. ՀՀ Առողջապահության նախարարության ինտերնետային էջով հրապարակումների թիվը 2014 թ. համեմատությամբ կրկնակի անգամ նվազել է, իսկ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային էջով հրապարակումների թիվը՝ կրկնակի անգամ աճել:

2014 թ. ՀՀ Առողջապահության նախարարության ինտերնետային էջով 17 հրապարակումներից 5-ը վերաբերել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կոնկրետ անձանց: 2014 թ. մյուս 12 և 2015 թ. բոլոր 7 հրապարակումները այս կամ այն կերպ անդրադարձել են հոգեկան առողջության բնագավառում առկա համակարգային խնդիրներին և բարեփոխումներին: Այսպիսով, ՀՀ Առողջապահության նախարարությունը 2014 թ. ավելի շատ է անդրադարձել հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրներին և բարեփոխումների ընթացքին, քան 2015 թ.:

Միաժամանակ հարկ է ուշադրություն դարձնել, որ 2015 թ. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային էջով 5 հրապարակումներից 4-ը անմիջականորեն վերաբերել են Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացմանը, ևս մեկը՝ միջանկյալ տեղեկատվություն է տրամադրել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի ծառայությունների վերաբերյալ:

ՀՀ Առողջապահության նախարարության ինտերնետային էջով 7 հրապարակումներից միայն երկուսն են անմիջականորեն անդրադարձել Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությանը: Ավելին, հրապարակումներից երկուսում անդրադարձ է եղել հոգեբուժարանների զարգացմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի մշակմանը, չնայած հոգեկան առողջության բնագավառում ներկա միտումներն ուղղված են հոգեբուժական հաստատությունների ապաինստիտուցիոնալիզացիային և ոչ թե դրանց պահպանմանն ու զարգացմանը:

[3] Հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների իրականացման հիմնական պատասխանատուն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների պատասխանատուն՝ ՀՀ Առողջապահության նախարարությունը:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Ինչ վերաբերում է 2014 թ. հրապարակումներին, ապա թե՛ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և թե՛ ՀՀ Առողջապահության նախարարության ինտերնետային էջով միայն մեկական հրապարակում է տարածվել, որն անմիջականորեն անդրադարձել է վերը նշված փաստաթղթերով սահմանված միջոցառումների իրականացմանը:

Կարող ենք եզրակացնել, որ 2015 թ. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՀՀ Առողջապահության նախարարության համեմատ առավել հետամուտ է եղել հայեցակարգի իրականացմանը և դրա վերաբերյալ հանրության իրազեկմանը: Ընդ որում ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրների լուծմանն ուղղված Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության իրականացման վերաբերյալ նյութերի փոքր թվաքանակը կարող է պայմանավորված լինել ռազմավարության իրականացման հետ կապված խնդիրների կամ ռազմավարության նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքով:

ՀՀ Ոստիկանության ինտերնետային էջով հրապարակված 3 նյութ վերաբերել են ՀԱԽՈՒ անձանց կողմից կատարված հանցագործություններին, 2-ը՝ ՀԱԽՈՒ անձանց որոնման վերաբերյալ հայտարարություններ են եղել, մեկ նյութ վերաբերել է պատահարին, որից տուժել է ՀԱԽՈՒ անձը, ևս մեկը՝ սելֆիին՝ որպես հոգեկան հիվանդության և հնարավոր վտանգներին:

ՀՀ Գլխավոր դատախազության ինտերնետային էջով լուսաբանված նյութը վերաբերել է անձին հոգեբուժական փորձաքննության ենթարկելուն:

Պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից տրամադրված տեղեկատվությունը տարածվել է նաև զանգվածային լրատվության միջոցներով: Մասնավորապես զանգվածային լրատվության միջոցներով տարածված 541 նյութերից 104-ում տեղեկատվությունը ամբողջությամբ կամ մասամբ տրամադրվել է պաշտոնատար անձանց կողմից կամ հրապարակվել է պետական մարմնի ինտերնետային էջում տեղադրված տեղեկատվությունը: 2015 թվականին տարածված 541 նյութերից 441-ում տեղեկատվություն են տրամադրել ոչ պաշտոնատար անձինք, այդ թվում՝ մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչները (տե՛ս աղյուսակ 2):

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Աղյուսակ 2

Զանգվածային լրատվության միջոցներով տարածված հրապարակումների դասակարգումը՝ ըստ պետական մարմիններից և մասնավոր կազմակերպություններից և/կամ ոչ պաշտոնատար անձանցից ստացված տեղեկատվության

N	Պետական մարմնի անվանումը	2014 թ.		2015 թ.	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	ՀՀ Ոստիկանություն	27	11.7	25	24
2	ՀՀ Քննչական կոմիտե	4	1.7	25	24
3	ՀՀ Քննչական ծառայություն	11	4.8	14	13.4
4	Տեղական ինքնակառավարման մարմին	18	7.8	11	10.6
5	ՀՀ Առողջապահության նախարարություն	91	39.6	10	9.6
6	Նյարդահոգեբուժական բուժհաստատություն	6	2.6	10	9.6
7	ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	0	0	5	4.8
8	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	0	0	2	2
9	Դատական տեղեկատվական համակարգ	2	0.9	1	1
10	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	0	0	1	1
11	ՀՀ Պաշտպանության նախարարություն	20	8.7	0	0
12	Առողջապահական կազմակերպություն	31	13.5	0	0
13	ՀՀ Դատախազություն	6	2.6	0	0
	Այդ թվում՝				
	ՀՀ Գլխավոր դատախազություն	4	1.7	0	0
	ՀՀ Երևանի դատախազություն	1	0.4	0	0
	ՀՀ մարզերի դատախազություններ	1	0.4	0	0
14	ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայություն	2	0.9	0	0
15	ՀՀ Կառավարություն	1	0.4	0	0
16	Այլ	11	4.8	0	0
	Ընդամենը	**230**	**100**	**104**	**100**
Մասնավոր կազմակերպություններ և/կամ ոչ պաշտոնատար անձինք		**2014 թ.**		**2015 թ.**	
		Թիվը	**Տոկոսը**	**Թիվը**	**Տոկոսը**
1	Փաստաբան և/կամ իրավաբան	8	4	22	5
2	Հոգեբույժ և/կամ հոգեբան	12	6	19	4.3
3	Հասարակական, այդ թվում՝ հոգեկան առողջության ոլորտում գործող կազմակերպություններ	19	9.4	18	4.1
4	ՀԱԽՈՒ անձի հարազատ և/կամ քաղաքացի	46	22.9	11	2.5
5	Հոգեբուժական ծառայություններ տրամադրող կազմակերպություն /մասնավոր/	0	0	4	0.9
6	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	20	9.9	4	0.9
7	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ	7	3.5	2	0.5
8	Միջազգային կազմակերպություն	0	0	2	0.5
9	Հայաստանի ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ	1	0.5	0	0
10	Զանգվածային լրատվության միջոց և/կամ նշված չի	55	27.4	346	78.4
11	Այլ	33	16.4	13	2.9
	Ընդամենը	**201**	**100**	**441**	**100**
Ընդամենը		**431***		**545****	

*2014 թ. զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների թիվը 415 է, 431 թիվը ստացվել է 16 նյութերում և՛ պետական մարմիններից, և՛ ոչ պաշտոնատար անձանց և/կամ մասնավոր կազմակերպությունների կողմից տեղեկատվության առկայությամբ:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

**2015 թ. զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների թիվը 541 է, 545 թիվը ստացվել է 4 նյութերում և՛ պետական մարմիններից, և՛ ոչ պաշտոնատար անձանց և/կամ մասնավոր կազմակերպությունների կողմից տեղեկատվության առկայությամբ:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, 2014 թ. համեմատությամբ 2015 թ. կտրուկ նվազել է պետական մարմինների տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը (2014 թ.՝ 230 նյութ, 2015 թ.՝ 104 նյութ): Ընդ որում 2015 թ. զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների թիվը 2014 թ. համեմատությամբ աճել է (2014 թ.՝ 415 նյութ, 2015 թ.՝ 541 նյութ): Միևնույն ժամանակ ավելի քան երկու անգամ աճել է մասնավոր կազմակերպությունների և/կամ ոչ պաշտոնատար անձանց կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը (2014 թ.՝ 201 նյութ, 2015 թ.՝ 441 նյութ):

Հարկ է անդրադառնալ, որ եթե 2014 թ. զանգվածային լրատվության միջոցներով պետական մարմիններից ՀՀ Առողջապահության նախարարության և առողջապահական կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումներն են գերակշռել և միայն երրորդ տեղում են իրավապահ մարմինները՝ մասնավորապես ՀՀ Ոստիկանությունը, ապա 2015 թ. առաջին երեք առավել շատ տեղեկատվություն տարածած պետական մարմիններն են՝ ՀՀ Ոստիկանությունը, ՀՀ Քննչական կոմիտեն և ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը: Նշված վերջին երեք մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա 2014 թ. հրապարակվել է ընդհանուր թվով 42 նյութ, 2015 թ.՝ 64: Սա փաստում է, որ 2015 թ. զանգվածային լրատվության միջոցներով պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հետաքննական բովանդակությամբ հրապարակված նյութերի աճ է գրանցվել: Իսկ հետաքննական բովանդակությամբ հրապարակումները որպես կանոն պարունակում են տեղեկատվություն ՀԱԽՈՒ անձանց կողմից կատարված քրեորեն հետապնդելի գործողությունների կամ պաշտոնատար անձանց կողմից ՀԱԽՈՒ անձանց իրավունքների հնարավոր խախտումների մասին:

Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է վերևում, 2015 թ. համեմատությամբ ՀՀ Առողջապահության նախարարության ինտերնետային էջով 2014 թ. առավել շատ տեղեկատվություն է տարածվել հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրների, անհրաժեշտ բարեփոխումների և դրանց լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ, միաժամանակ զանգվածային լրատվության միջոցներով ևս նշված թեմաների վերաբերյալ լուսաբանող նյութերը 2015 թ. նվազել են (24 նյութ՝ 2014 թ., 7 նյութ՝ 2015 թ.):

Ինչպես արդեն նշվեց, 2015 թ. զանգվածային լրատվության միջոցներով տարածված նյութերում առավել շատ տեղեկատվություն տրամադրող երեք պետական մարմիններն են ՀՀ Ոստիկանությունը (24 տոկոս), ՀՀ Քննչական կոմիտեն (24 տոկոս) և ՀՀ Քննչական ծառայությունը՝ (13.4 տոկոս): Զանգվածային լրատվության միջոցներով տարածված նյութերում առավել մեծ թվով տեղեկատվություն տրամադրող ոչ պաշտոնատար անձինք և/կամ մասնավոր կազմակերպություններն են փաստաբանները և/կամ իրավաբանները (5 տոկոս), հոգեբույժները և/կամ հոգեբանները (4.3 տոկոս), հասարակական, այդ թվում՝ հոգեկան առողջության ոլորտում

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

գործող կազմակերպությունները (4.1 տոկոս):

ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութերը (թվով 25) վերաբերել են ՀԱԽՈՒ անձանց կողմից կատարված հանցագործություններին (11 նյութ), ՀԱԽՈՒ անձանց որոնման հայտարարությունների (5 նյութ), պատահարի, որից տուժել է ՀԱԽՈՒ անձը (4 նյութ), սելֆիին՝ որպես հոգեկան հիվանդության և հնարավոր վտանգներին (1 նյութ), ՀԱԽՈՒ անձանց կողմից ինքնասպանություններին (1 նյութ), ՀԱԽՈՒ անձանց կողմից հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցներին (1 նյութ), ՀԱԽՈՒ անձանց կողմից անընդունելի, տարօրինակ գործողություններին (1 նյութ), ինքնասպանության փորձ կատարած անձի նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննության նշանակմանը (1 նյութ): Ի դեպ, նշված նյութերից 21-ը ՀՀ Ոստիկանության ինտերնետային էջում տեղադրված նյութերի կրկնություններն են:

Զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված 25 նյութերը, որոնց տեղեկատվություն տրամադրողը ՀՀ քննչական կոմիտեն է, վերաբերում են ՀԱԽՈՒ անձանց կողմից կատարված հանցագործություններին (11 նյութ), քրեական գործերի շրջանակներում որպես տուժող և մեղադրյալ ներգրավված և Ադրբեջան փախուստի դիմած անձի հոգեկան առողջության խնդիրներ ունենալուն (5 նյութ), հոգեբուժարանի աշխատակցի կողմից հոգեկան հիվանդության մասին դրական եզրակացություն տալու համար կաշառք պահանջելուն (4 նյութ), Գյումրիում 2015 թ. սկզբին Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության գործով մեղադրյալի դատահոգեբուժական փորձաքննություններին (3 նյութ), ՀԱԽՈՒ անձանց կողմից ինքնասպանություններին (1 նյութ), պատահարի, որից տուժել է ՀԱԽՈՒ անձը (1 նյութ): ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տեղեկատվությունը տրամադրվել է 10 դեպքերի կապակցությամբ:

ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված 14 նյութերից 7-ը վերաբերել է հոգեբուժարանի աշխատակցի կողմից անձի հոգեկան հիվանդության մասին դրական եզրակացություն տալու համար կաշառք պահանջելուն (1 դեպք), մյուս 7-ը՝ ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումների հիմքով հարուցված քրեական գործի քննությանը (1 դեպք):

2015 թ. փաստաբանների և/կամ իրավաբանների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութերը (թվով 22) վերաբերել են Գյումրիում 2015 թ. հունվարին 7 անդամներից բաղկացած Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության գործին (10 նյութ), ՀԱԽՈՒ կամ հանցագործության մեջ մեղադրվող անձանց նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելուն (5 նյութ), հոգեբուժական հաստատությունում վատ վերաբերմունքի դեպքի հետ կապված նախաքննությանը, այդ թվում՝ նախաքննությանը խոչընդոտելու համար շահերի պաշտպանի նկատմամբ քրեական գործի հարուցմանը (5 նյութ), ՀԱԽՈՒ անձանց կողմից կատարված հանցագործություններին (1 նյութ), ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ կատարված հանցագործություններին (1 նյութ):

Հոգեբույժների/հոգեբանների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա զանգվածային

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

լրատվության միջոցներով հրապարակված նյութերը (թվով 19) վերաբերել են հոգեկան առողջության խնդիրների առաջացման պատճառներին, կանխարգելմանը, նախանշաններին, բուժման եղանակներին (5 նյութ), հոգեկան առողջության բնագավառում իրավիճակին՝ վիճակագրական տվյալներ, մատուցվող ծառայություններ (5 նյութ), հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրներին, բարեփոխումների ընթացքին ու դրանց իրականացմանն ուղղված գործողություններին (4 նյութ), ՀԱԽՈՒ անձանց կողմից հանցագործություն կամ ինքնասպանություն կատարելու հնարավոր ռիսկերին (3 նյութ), դատահոգեբուժական փորձաքննության արդյունքների (1 նյութ), մի հոգեբույժի աշխատանքին և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ նրա դրական վերաբերմունքին (1 նյութ):

Հասարակական, այդ թվում՝ հոգեկան առողջության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակված նյութերը (թվով 18) վերաբերել են Գյումրիում 2015 թ. հունվարին Ավետիսյանների 7 անդամներից բաղկացած ընտանիքի սպանության գործին (4 նյութ), հոգեկան առողջության պահպանման գործում ԶԼՄ-ների կարևորությանը (6 նյութ), հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրներին, բարեփոխումների ընթացքին ու դրանց իրականացմանն ուղղված գործողություններին (3 նյութ), հոգեկան առողջության բնագավառում իրավիճակին՝ վիճակագրական տվյալներ, մատուցվող ծառայություններ (2 նյութ), քաղաքացիական գործի քննությանը, որում որպես պատասխանող ներգրավված է ՀԱԽՈՒ անձ (2 նյութ), ՀՀ զինված ուժերում վատ վերաբերմունքի արդյունքում զինվորի մոտ հոգեկան առողջության խնդիրների առաջացմանը (1 նյութ):

Այսպիսով, արձանագրում ենք, որ 2014 թ. համեմատությամբ 2015 թ. հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների թիվն աճել է, միաժամանակ 2014 թ. համեմատությամբ 2015 թ. նվազել է զանգվածային լրատվության միջոցներով պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա հրապարակված նյութերի թիվը:

Ավելին, 2015 թ. զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութերում, որոնց համար տեղեկատվությունը տրամադրել են պետական մարմինները, հետաքննական բնույթի նյութերը գերակշռել են առողջապահական բնույթի նյութերին:

Նաև արձանագրում ենք, որ 2014 թ. համեմատությամբ զանգվածային լրատվության միջոցներով 2015 թ. նվազել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց առողջապահական և սոցիալական հարցերով զբաղվող ՀՀ Առողջապահության և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը: Սա ևս փաստում է պետության կողմից տվյալ բնագավառի վերաբերյալ ուշադրության նվազումը:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների բնույթը, հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած նրանց ազդեցությունը

Հրապարակումների բնույթը

2015 թ. հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների մեծ մասը՝ մոտ 73 տոկոս, տեղեկատվական բնույթի են, մոտ 26 տոկոսը՝ հետաքննական, մոտ 1 տոկոսը՝ դիրքորոշում արտահայտող (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տեղեկատվության դասակարգումը՝ ըստ հրապարակումների տեսակների

N	Տեսակը	2011 թ.[4]		2012 թ.[5]		2013 թ.[6]		2014 թ.		2015 թ.		Ընդամենը
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը
1	Դիրքորոշում արտահայտող	5	2	7	10	0	0	28	6	4	0.7	44
2	Հետաքննական	115	46	17	25	23	23	107	24	148	26.4	410
3	Տեղեկատվական	130	52	45	65	79	77	308	70	409	72.9	971
Ընդամենը		**250**[7]	100	**69**	100	**102**	100	**443**	100	**561**	100	**1425**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ից, 2011 թ. հրապարակված նյութերի զգալի մասը՝ 46 տոկոսը, հետաքննական բովանդակությամբ են եղել, իսկ հաջորդող տարիներին հետաքննական բովանդակությամբ նյութերը կազմել են հրապարակումների 23-27 տոկոսը: Չնայած ընդհանուր հրապարակումների թվում հետաքննական բովանդակությամբ նյութերի տեսակարար կշիռը նվազել է, այնուամենայնիվ դրանց թիվը զգալի է: Միևնույն ժամանակ 2013 թ. համեմատությամբ 2014 թ. հետաքննական բովանդակությամբ հրապարակումների թիվը փաստացի աճել է ավելի քան 4 անգամ, իսկ 2015 թ.՝ ավելի քան 6 անգամ:

Հարկ է նշել, որ պետական մարմինների ինտերնետային էջերով 2015 թ. տարածված 20 հրապարակումներից միայն 3-ն են եղել հետաքննական (15 տոկոս), իսկ մյուս 17-ը՝ տեղեկատվական (85 տոկոս), մինչդեռ 2014 թ. տարածված 28 նյութերից 7-ն են եղել հետաքննական (25 տոկոս), իսկ 21-ը՝ տեղեկատվական (75 տոկոս): Կարող ենք արձանագրել, որ պետական մարմինների ինտերնետային էջերով տարածված հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ ընդհանուր նյութերում հետաքննական բնույթի նյութերի տեսակարար կշիռը գրեթե կիսով չափ

[4] 2011 թ. դիտարկվել է 26 ինտերնետային էջ փետրվար-նոյեմբեր ժամանակահատվածում:
[5] 2012 թ. դիտարկվել է 20 ինտերնետային էջ մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածում:
[6] 2013 թ. դիտարկվել է 13 ինտերնետային էջ հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում:
[7] 2011-2013 թթ. ևս 10 հրապարակում դասակարգվել են որպես հարցազրույց և վերլուծություն:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

նվազել է, և գրանցվել է հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տեղեկատվական բնույթի նյութերի աճ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 2011-2015 թթ. ընթացքում ամենաշատ թվով հետաքննական բնույթի նյութեր տարածվել են 2015 թ., իսկ նման նյութերը մեծ մասամբ հանգեցնում են ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցությունը

Հանրային կարծիքի ձևավորման վրա էական նշանակություն ունի՝ տարածվող նյութը դրական, թե բացասական վերաբերմունք է ձևավորում ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ: 2015 թ. հրապարակումների մոտ 19 տոկոսը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունք են ձևավորում (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ հոգեկան առողջության բնագավառը ներկայացնելու բնույթի

N	Բնույթը	2011 թ.		2012 թ.		2013 թ.		2014 թ.		2015 թ.		Ընդամենը
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը
1	Բացասական վերաբերմունք ձևավորող նյութեր	65	25.3	3	4	18	17	85	19.3	107	19.1	278
2	Դրական վերաբերմունք ձևավորող նյութեր	1	0.3	0	0	1	1	2	0.4	2	0.3	6
3	Չեզոք բնույթի նյութեր	192	74.4	67	96	84	82	356	80.3	452	80.6	1151
Ընդամենը		**258**	100	**70**	100	**103**	100	**443**	100	**561**	100	**1435**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, 2015 թ. գերակշռում են նյութերը, որոնք ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում: Այնուամենայնիվ, ինչպես և մյուս տարիներին, 2015 թվականին ևս բարձր է այն նյութերի քանակը, որոնք բացասական վերաբերմունք կարող են ձևավորել ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ: Ընդ որում, 2012 թ. նման նյութերը կտրուկ նվազել են 2011 թ. համեմատությամբ, մասնավորապես 2011 թ. կազմել են հրապարակումների մոտ 25 տոկոսը, իսկ 2012 թ.՝ ընդամենը 4 տոկոսը: Սակայն հաջորդող տարիներին նշված նյութերի աճ է գրանցվել (2013 թ.՝ 17 տոկոս, 2014 թ.՝ 19.3 տոկոս, 2015 թ.՝ 19.1

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

տոկոս): Միևնույն ժամանակ 2015 թ. տարածված բացասական վերաբերմունք ձևավորող նյութերի թիվը (107) գերազանցել է նախորդող տարիներին նման նյութերի թվից (2011 թ. 65 նյութ, 2012 թ.՝ 3, 2013 թ.՝ 18, 2014 թ.՝ 85):

ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող նյութերը, ինչպես նախորդող տարիներին, փոքր թիվ են ներկայացնում (0.3 տոկոս):

ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումները, ինչպես և անցած տարիներին, հիմնականում տեղեկատվություն են տրամադրում քրեորեն հետապնդելի գործողությունների մասին, որոնք կատարվել են ՀԱԽՈՒ անձանց կողմից կամ նշվել է, որ հնարավոր է՝ նրանք են կատարել:

Ուշադրության է արժանի հրապարակումներից մեկը, որն անդրադառնում է հոգեկան առողջության բնագավառում այլընտրանքային ծառայությունների, այդ թվում՝ խնամքի տների ներդրմանը, որը փակ հաստատությունների բեռնաթափման նպատակ է հետապնդում: Նյութի հեղինակը շեշտում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը ևս կարող է դիմում ներկայացնել տվյալ խնամքի տնից դուրսգրման համար: Ըստ հեղինակի՝ դա «բավականին խոցելի կետ է, քանի որ նպաստում է հոգեկան խնդիրներ ունեցողների փողոց դուրս գալուն»: Ավելին, հեղինակը նշում է, որ ՀԱԽՈՒ անձը, որի վտանգավորության վերաբերյալ դատարանը դեռևս որոշում չի կայացրել, դրսում գտնվելով, կարող է ծանր հանցագործություն կատարել՝ սպանելով ընտանիքի անդամներին:

Ինչպես նախկինում նշել ենք, նման հրապարակումները հանգեցնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի ամրապնդմանը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք մյուսների նման իրավունք ունեն անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու, այդ թվում՝ ընտրելու բնակության վայրը, որտեղ և ում հետ են ապրելու, ինչը ամրագրված է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում[8]:

Սույն տեղեկանքում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հրապարակումներին, որտեղ որպես պիտակ օգտագործվում են «հոգեկան հիվանդ» «շիզոֆրենիկ» և նման այլ բառեր, բառակապակցություններ, ընդ որում դրանք կիրառում են ճանաչված քաղաքական գործիչներ, պաշտոնյաներ (այս հրապարակումները դիտարկվել են առանձին և 561 նյութերի մեջ չեն մտնում): Նման բառերը, բառակապակցությունները կարծրատիպեր և խարան են սերմանում, և առավել սուր է հնչում, երբ դրանք հնչում են ճանաչում ունեցող, այդ թվում՝ քաղաքական գործիչների շուրթերից:

Հարկ է ուշադրություն դարձնել նաև, որ հրապարակումներում երբեմն լրագրողները նշում են որևէ անձի հոգեկան առողջության խնդիր ունենալու կամ հոգեկան առողջության հնարավոր խնդրի մասին, երբ տվյալ հրապարակման մեջ հոգեկան առողջության խնդիր ունենալու փաստը էական նշանակություն չունի: Օրինակ՝ քաղաքացու մահվան վերաբերյալ հրապարակման մեջ նշվող

[8] http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

տեղեկատվության տարածումը, որ վերջինս հաշվառված է այս կամ այն հոգեբուժական հաստատությունում, ավելի շուտ բացասական ազդեցություն կարող է ունենալ ՀԱԽՈՒ անձանց վերաբերյալ կարծրատիպերի հաղթահարման տեսակետից:

2015 թ. դիտարկված նյութերը հիմնականում վերաբերում են հոգեկան առողջության բնագավառում ուսումնասիրություններին, հետազոտություններին, հանցագործություններին, ոչ իրավաչափ կամ տարօրինակ, անընդունելի գործողություններին, որոնք կատարվում են ՀԱԽՈՒ անձանց կողմից կամ վերագրվում են նրանց, ինքնասպանություններին կամ ինքնասպանությունների փորձերին: Մեծ թիվ են կազմել նաև հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրներին և դրանց լուծման կապակցությամբ իրականացվող միջոցառումներին վերաբերող նյութերը:

2015 թ. հավաքագրված հրապարակումների դասակարգումը, ըստ հոգեկան առողջության բնագավառի խնդիրների, ներկայացված է աղյուսակ 5-ում:

Հարկ է նշել, որ հրապարակումներից մեկում ներկայացվում է հոգեբույժի աշխատանքը, վերջինիս առողջությանը ՀԱԽՈՒ անձանց կողմից հասցված վնասները և այնուամենայնիվ իր աշխատանքի և ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ հոգեբույժի դրական վերաբերմունքը: Նման նյութերը ցավոք հատային են, մինչդեռ մեծ նշանակություն կարող են ունենալ ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման գործում՝ նպաստելով կարծրատիպերի վերացմանը:

Զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված 60 նյութ վերաբերել են 2015 թ. սկզբին Գյումրի քաղաքում Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանությանը: Նյութերը հիմնականում անդրադառնում են սպանության մեջ մեղադրվողի հոգեկան առողջության հավանական խնդիրների առկայությանը, նրա՝ նախկինում հոգեբուժական հաստատությունում բուժմանը, վերջինիս նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննության նշանակմանը, անցկացմանը, արդյունքներին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ շարունակվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խարանավորումն ու կարծրատիպերի ամրապնդումը խթանող նյութերի հրապարակումը, որը բացասաբար է ազդում ՀԱԽՈՒ անձանց իրավունքների իրացման և հավասար հնարավորությունների ապահովման տեսանկյունից և այս անձանց իրավունքների խախտումների հնարավոր դրսևորումների խթան է հանդիսանում:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Աղյուսակ 5

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ հոգեկան առողջության բնագավառի խնդիրների

N	Խնդիրները	Թիվը	Տոկոսը
1	Հոգեկան առողջության բնագավառում իրականացվող ուսումնասիրություններ, հետազոտություններ, որոնք անդրադառնում են նաև հոգեկան առողջության խնդիրների առաջացման պատճառներին, կանխարգելմանը	121	21.6
2	Հանցագործություններ, ոչ իրավաչափ կամ տարօրինակ, անընդունելի գործողություններ, որոնք կատարվել են ՀԱԽՈՒ անձանց կողմից կամ վերագրվել են նրանց, այդ թվում՝ ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ հարկադիր բուժում նշանակելը	97	17.3
3	Գյումրիում 2015 թ. հունվարին 7 անդամներից բաղկացած Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության գործ	60	10.7
4	Հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրներ, բարեփոխումների ընթացք ու դրանց իրականացմանն ուղղված գործողություններ	42	7.5
5	Հոգեկան առողջության խնդիրների առաջացման պատճառներ, կանխարգելում, նախանշաններ, բուժման եղանակներ	39	6.9
6	ՀԱԽՈՒ անձանց կողմից ինքնասպանություններ կամ ինքնասպանության փորձեր, ինքնասպանությունների հակվածություն, ինչպես նաև ինքնասպանության փորձից հետո անձին հոգեբուժական հաստատություն տեղափոխում	38	6.8
7	Պաշտոնյաների մերձավորների քրեական գործերի և հոգեկան առողջության խնդիրների միջև կապ	25	4.5
8	Հոգեբուժական հաստատությունում կամ ՀԱԽՈՒ անձանց հետ պատահարներ	15	2.7
9	Հանցագործության մեջ մեղադրվող կամ հանցագործության մասին հայտնած, ինքնասպանության փորձ կատարած կամ ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննության նշանակում և արդյունքներ	12	2.1
10	Հոգեբուժարանի աշխատակցի կողմից հոգեկան հիվանդության մասին դրական եզրակացություն տալու համար կաշառքի պահանջ	11	2
11	Քրեական գործերի շրջանակներում որպես տուժող և մեղադրյալ ներգրավված և Ադրբեջան փախուստի դիմած անձի հոգեկան առողջության խնդիրներ ունենալը	11	2
12	Հոգեկան առողջության պահպանման գործում ԶԼՄ-ների կարևորությունը	10	1.8
13	Հոգեկան առողջության բնագավառում իրավիճակը՝ վիճակագրական տվյալներ, մատուցվող ծառայություններ	10	1.8
14	ՀՀ զինված ուժերում վատ վերաբերմունքի արդյունքում հոգեկան առողջության խնդիրների ձեռքբերում	8	1.4
15	ՀԱԽՈՒ անձի որոնման հայտարարություն	7	1.2
16	ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումների հիմքով հարուցված քրեական գործի քննություն	7	1.2
17	Հոգեկան առողջության կոնկրետ խնդիրներ	7	1.2
18	Հոգեբուժական հաստատությունում վատ վերաբերմունքի դեպքի հետ կապված գործի քննություն	5	0.9
19	Հոգեկան առողջության բնագավառին առնչվող միջոցառումներ	4	0.7
20	Հայտնի անձանց հոգեկան առողջության խնդիրներ ունենալը կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող հայտնիներ	4	0.7
21	Մի հոգեբույժի աշխատանքին և ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ նրա դրական վերաբերմունքին	1	0.2
22	«Լքված» հոգեբուժարանից նկարների ցուցադրում	1	0.2
23	Այլ	26	4.6
	Ընդամենը	**561**	**100**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Հրապարակված նյութերը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտման տեսանկյունից

Դիտարկված ինտերնետային էջերով հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տարածված նյութերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կամ հոգեբուժական հաստատությունում գտնվող անձանց իրավունքների հնարավոր խախտման 12 նյութ է հրապարակվել: Նշված հրապարակումները վերաբերել են խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքին: Մասնավորապես 7 նյութ վերաբերել է քրեակատարողական հիմնարկում ՀԱԽՈՒ անձի նկատմամբ բռնության փաստի հիման վրա քրեական գործի հարուցմանը և նախաքննության իրականացմանը (միևնույն դեպքն է լուսաբանվել), 5 նյութ՝ հոգեբուժական հաստատությունում անձին խոշտանգման ենթարկելու, ինչպես նաև հոգեբուժարանի վատ պայմանների և անձին անհիմն հոգեբուժարանում պահելու վերաբերյալ գործի հարուցմանն ու նախաքննության իրականացմանը (միևնույն դեպքն է լուսաբանվել): Առաջին դեպքի վերաբերյալ 7 նյութերը հրապարակվել են զանգվածային լրատվության միջոցներով, իսկ տեղեկատվություն տրամադրողը ՀՀ Հատուկ քննչական ծառայությունն է եղել: Մյուս դեպքի վերաբերյալ 5 նյութերը նույնպես հրապարակվել են զանգվածային լրատվության միջոցներով, իսկ տեղեկատվությունը տրամադրվել է քաղաքացու շահերի պաշտպանի (4 նյութ) և հոգեբուժական հաստատության կողմից (1 նյութ):

Հարկ է նշել, որ նախորդող տարիներին ևս հրապարակվել են Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կամ հոգեբուժական հաստատությունում գտնվող անձանց իրավունքների հնարավոր խախտումները լուսաբանող նյութեր, որոնցից մեծ մասը նույնպես վերաբերել է խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքին: Ընդ որում 2015 թ. հրապարակված դեպքը՝ հոգեբուժական հաստատությունում անձի իրավունքի հնարավոր խախտման վերաբերյալ, լուսաբանվել է նաև 2014 թ.:

2015 թ. հրապարակված 561 նյութերից 29-ը պարունակել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անձնական տվյալներ (անուն, ազգանուն, դիմանկար, հիվանդության ախտորոշում)՝ առանց նշված տվյալների հրապարակման թույլտվության վերաբերյալ որևէ նշում կատարելու (միջազգային և ներպետական մի շարք նորմերով սահմանված է պացիենտին առնչվող տեղեկատվության գաղտնիության ապահովման իրավունքը): Ընդ որում նյութերից 4-ը հրապարակվել է պետական մարմինների ինտերնետային էջով: Մյուս 25 նյութերում տեղեկատվության տրամադրող են հանդիսացել ՀՀ Ոստիկանությունը (10 նյութ), ՀՀ Քննչական կոմիտեն (5 նյութ), նյարդահոգեբուժական բուժհաստատությունը (3 նյութ), ՀԱԽՈՒ անձանց ծանոթ քաղաքացիներ (2 նյութ), զանգվածային լրատվության միջոցը (5 նյութ):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ դեռևս հրապարակվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերաբերյալ գաղտնի տեղեկատվություն պարունակող նյութեր՝

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

այդպիսով խախտելով նրանց անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Լուսաբանվում են նաև ՀԱԽՈՒ անձանց իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ հրապարակումներ, ինչը վկայում է ՀԱԽՈՒ անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում հնարավոր խնդիրների մասին:

Ամփոփում

Այսպիսով, 2015 թ. հոգեկան առողջության բնագավառին վերաբերող 561 հրապարակումներից 20-ը տարածվել է պետական մարմինների ինտերնետային էջերով, 541-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Համեմատության մեջ դնելով. պետական մարմինների ինտերնետային էջերով հրապարակումների թիվը և բովանդակությունը 2011-2015 թթ ընթացքում, ակնհայտ է, որ վերջին երկու տարիներին առավել մեծ ուշադրության է արժանանում հոգեկան առողջության բնագավառը, որը պայմանավորված է բարեփոխումներին ուղղված միջոցառումների կազմակերպմամբ և իրականացմամբ: Սակայն 2014 թ. համեմատությամբ ոլորտի նկատմամբ ուշադրությունը 2015 թ. նվազել է:

Ինչպես և նախորդ տարիներին, հրապարակումներում շարունակվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումների դեպքերը, որն ինչպես անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ լրագրողների, հասարակայնության հետ կապերի մասնագետների ոչ պատշաճ իրազեկվածության հետևանք է, այնպես էլ մարդու իրավունքների և մասնավորապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների նկատմամբ պաշտոնատար անձանց ոչ համարժեք վերաբերմունքով:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող սակավաթիվ նյութերի կողքին դեռևս տեղ են գտնում մեծ թվով հրապարակումներ, որոնք բացասական ազդեցություն ունեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի ձևավորման վրա՝ խորացնելով խտրականության հիմք հանդիսացող խարանն ու կարծրատիպերը: Այսպես, 2015 թ. 561 հրապարակումներից միայն երկուսն են (0.3 տոկոս) դրական վերաբերմունք ձևավորում ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ, այն դեպքում, երբ 107-ը (19.1 տոկոս)՝ բացասական վերաբերմունք է ձևավորում:

Միևնույն ժամանակ ինտերնետային էջերով տարածվող նյութերում որպես պիտակ օգտագործվող «հոգեկան հիվանդ», «շիզոֆրենիկ» և նման այլ բառերը, բառակապակցությունները ևս բացասական ազդեցություն են թողնում ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի վրա:

Ուսումնասիրության միջոցով բացահայտված խնդիրների լուծման նպատակով վերստին առաջարկում ենք՝

1. մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներ իրականացնել պետական

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

աշխատողների, փակ և կիսափակ հաստատությունների աշխատակիցների, լրագրողների համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՀԱԽՈՒ անձանց խտրականությունից զերծ մնալու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքներին,

2. իրականացնել հոգեկան առողջության բնագավառի և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերաբերյալ լրագրողների շարունակական մասնագիտական զարգացումը,
3. հրապարակումներում առավել մեծ ուշադրություն դարձնել հոգեկան առողջության ոլորտում միտումների, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անկախ ապրելու ու համայնքում ներառվելու, այլոց հետ հավասար իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերաբերյալ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

Կազմակերպության գործունեության ոլորտներից է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով 2007 թվականից Կազմակերպության կողմից իրականացվել է մարդու իրավունքների մշտադիտարկումներ ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում, պետական բյուջեից հոգեկան առողջության բնագավառի ֆինանսավորման վերաբերյալ ուսումնասիրություն: Նաև շարունակաբար իրականացվում է հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի» և «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության» կատարումն ապահովող միջոցառումների իրականացման և պետական մարմինների ինտերնետային էջերով ու զանգվածային լրատվության միջոցներով տարածվող նյութերի մշտադիտարկում:

Իրականացված մշտադիտարկումների, ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվում են օրենսդրական և պրակտիկայի բարեփոխման առաջարկություններ:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ[a] hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am